



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 29

ՊԱՐԱՐԱԹ

17 ՄԱՐՏ 1907

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳԱԽՈՒՍ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ
Տարեկան 50 Ղրշ.	Տարեկան 54 Ղրշ.	Տարեկան 42 Ֆր.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

Զ Ե Ն Ի Թ

Իր ամէն մասանց մէջ կատարելապէս խնամուած միակ ժամացոյցը զոր կարելի ըլլայ յանձնարարել և երաշխաւորել այն բացարձակ ճշտութեան համար՝ որ իր յատկանիշն է .

ՄԵԾ ՄՐՑԱՆԱԿ ԲԱՐԻՉ 1900.

ԱՐՏԱԳՈՑ ՄՐՑՄԱՆ ՄԻԼԱՆ 1906,

Հանդերձ ժիւղի անդամակցութեամբ.

Թուրքիոյ և բովանդակ Արեւելքի համար միակ ներկայացուցիչը

Գ. ՍԱՐԳԻՍՕՖ Ե Ի ԸՆԿ

Մեծ մթերանոց ամէն տեսակ ժամացոյցներու, չղթաներու և գոհարեղէններու.

Կ. Պոլիս, Պադշահ-գաթու, Օռոզի-Պաֆ (Էօւկր-հփհնի) վաճառասան դիմաց Թիւ 16,


ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(آ. آصاودریان) شرکت صتییه مطبعیه — باب عالی جاده سنده نومرو ۵۷

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Այի ճաշքսի քիւ 52

Հատոր 40 փարսա



Ձեռնի, ոտի ու ոտի եւ ձեռնի,
էլիանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կտրի մեքենայի մնայ,
բայց էական կէտն է՝ լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տաղաուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅԾ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարեւ լաւործուածը,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՊՈՒՄՆԵՐ

ԲԵՐԱ

- (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին .
- (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱԼԱԹԱ

- (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը.
- (2. Դարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

- (1. Սուլթան համամ .
- (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 .

ՍԵԻՏԱՐ

Չարչը Պօյու, թիւ 120 .

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձիւղեր գաւառներու բոլոր ֆաղաֆներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ
343 կրկին, Տիւզօղլուի տունը:




ՏԵՐԻԵՆ-ԻՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Ժ. ՏԱՐԻ ԹԻԻ 29

ՇԱՐԱԹ

17 ՄԱՐՏ 1907



ԴԱՄԱՍԿՈՍԻ ԵԼԵԲՏՐԱԿԱՆ ԹՈՒՆՎԱՅՆԵՐԸ

ՔՕՆՍԵՌՆԵՐԸ

Նորութիւններ կան՝ որոնց այնքան վարժուած է ժողովուրդը, որ նորութիւն մը ըլլալէ դադարած՝ լոկ ձանձրոյթներ եղած են անոնք, այս կարգէն պէտք է դասել կանացի թուալէթներու յատուկ զանազանութիւնները, որոնց սին ու անցողական հրապոյրը ըմբոյխներէ վերջ՝ մէկ երկու ամսուան մէջ մոռցուելու կը դատապարտուին, հակառակ ակերով ոսկիներ խլելուն մեր քսակներէն:

Սակայն ամէն նորութիւն այս աւերիչ հանգամանքը չունի պէտք է ըսել:

Այս կամ այն բարենպաստակ հաստատութեան ի պատիւ (նոր բառ) սարքուած ֆոնէկները նորութեան կարգ անցած են վերջին երկու տարիներուն մէջ, ֆոնէկներ՝ որոնք հաստատութեան մը և կամ անհատի մը նիւթականին սատարելու կոչումն ունին:

Հանրութիւնը ասկէ առաջ միմիայն Հիւանդանոցին նուագահանդէսը գիտեր, և ա՛նոր կապակեր Մեծպահլի միջինքին, բայց հետզհետէ բարենպաստակ այս ձեռնարկը ընդհանրանալով, ժողովուրդը կամաց կամաց վարժուեցաւ այդ գրութեան, որ ինքնին շատ աղնիւ ու հրահանգիչ հանգամանք մը ունի:

Այս տողերը մէջ կը բերենք հրաւէր կարգալու համար մօտակայ զոյգ մը քօնսէռներուն, որոնց նպատակը որչափ բարի՝ նոյնքան ալ հանրային օգուտը շոշափող ինչ մը ունի իր մէջ:

Պէրպէրեան հաստատութեան և Սկիւտարի երեք միացեալ թաղերու վարժարաններուն ի պատիւ խորհուած ու կազմակերպուած այս զոյգ նուագահանդէսները վստահ ենք թէ յուսացուած և սպասուած արդիւնքը պիտի տան ու պիտի պսակուին հանրութեան օժանդակութեամբը:

Երեսուն տարուան կրթական հարկը՝ Պէրպէրեան վարժարան, իր գործօն և շինիչ ուղղութեամբը ծանօթ աշխարհի չորս հովերուն, այսօր կը փառաբանուի, և անգամ մ'ալ կ'ուզայ իր անվթար գոյութիւնը յիշեցնել համայնքին և ամէն անոնց՝ որոնք իրենց կրթական սնունդը հոնկէ առած են:

Ահա այդ տիպար վարժարանին սնունտն և յառաջադիմութեան համար, շրջանաւարտներէն ամէն անոնք՝ որոնք անուն մը և դիրք մը ունին հրապարակի վրայ, միաձուլ, որոշած են նուագահանդէս մը սարքել, ի պատիւ իրենց երախտագետ օգուտն և ի փառս Պէրպէրեան վարժարանին:

Երկրորդ նուագահանդէսն է Սկիւտարի միացեալ վարժարաններուն:

Արդի ժրջան թաղ. խորհուրդը նկատելով որ վարժարանին հինէն մնացած բաւական գումար մը բացը, արդի ծանրաբեռնեալ պիւտճէն կարելի չպիտի ըլլայ գոցել, ալնիւ դադափարը յղացած է, ինքն ալ նուագահանդէս մը կազմակերպել, որուն հասոյթով միմիայն կարելի պիտի ըլլայ վարժարանները հասցնել այն վիճակին՝ ուր դիմող հարիւրաւոր աղքատիկ մանկտին — շատը ձրի — կարող ըլլան կազմական կանոնադրին համաձայն ծծել ուսման հիւթը:

Արդ, ինչպէս կը տեսնէք այս բարենպաստակ ձեռնարկները նորութիւններ են մեզ համար, որովհետեւ մինչեւ հիմա մենք վարժուած էինք այս կամ այն կրթական գործին, կամ Եպիսկոպոսներու շրջադայած պընակները լեցնել, կամ Պատրիարքական կոնգակի մը նիւթապէս պատասխանել և կամ անհատական դիմումներու գոհացում տալ՝ խաբէր համար, բայց կը տեսնէք որ հիմա շնորհիւ նուագահանդէսներու գեղեցիկ ու հրահանգիչ նորութեան, ամէն անհատ իր սրտաբուխ նպատակին փոխան՝ պատեհութիւնը և առիթը պիտի ունենայ վայելելու շքեղ ցերեկոյթ մը, վարպետ արուեստագետներու եւրոպական այն անուշ երաժշտութիւնը, որուն վրայ կարելի է գաղափար իսկ չունէր, այսպէսով թէ մեր ականջները պիտի մարդուին գեղեցկին, ճաշակին և զգացումներուն, և թէ մեր ձեռքերը պիտի վարժուին լիապէս օգնել կրթական հաստատութեանց, որոնց գլուխը ՄԱՐԴԸ կայ՝ բայց հակադարձը . . . :

Ահա բառը՝ որով միայն կարելի է հասնիլ նպատակին:

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Ա Ն Ո Ն Ք

Beati i poveri di spirito .

« Երանի՛ր հոգւով աղքատներուն » :

Անոնք՝ այսինքն մեր դիմացի Աթանիկ աղան, քովի Արմիկ սուտուն, անդիի միւսիւ Երուանդը, և ասդիի Բուրուլը, Աղապէյը :

Ամենքն ալ՝ իմացականութեան Ղազարոսներ, որոնց յար և նմանը վնասուելու համար Սթանլէ պարտաւ տեղը այնքան հեռունները գտցած է :

Ի՛նչ ահագին տարբերութիւն կայ անոնց և մեր ապրելու, մտածելու, զգալու և տեսնելու եղանակին մէջ :

Ա՛խ, եթէ կարենայի չըլլալ ինչ որ եմ, ապաւովապէս ըլլալ պիտի ուզէի ինչ որ չեմ, միմիայն պատկանելու համար այն երիցս եւրանեալ դասակարգին՝ ուր օղալը չապիկ հագնողը միւսիւ է, և մօրը մէկ հատիկը եղողը Աղապէյ :

Դասակարգ մը, կիներ կան՝ որոնք համոզուած են թէ Աստուած արեւը շինած է լաթ չորցնելու համար :

Կիներ՝ որ որքան ծեծ ուտին այնքան շատ կը սիրեն էրեկներն . օսկօբաթիի դրութիւն մը, որ բերնին ջուրերը վազընել կուտայ այն էրիկ մարդուն՝ որ ծաղիկով անգամ դպչել չուզեր իր կնկան :

Եւ ի՞նչպէս կ'ուզէք որ չնախանձիմ այն տեսակ մարդերու՝ որոնք աղջկան մը — քեզ համար կը մեռնիմ կոր, կ'ըսեն և օրէ օր կը ... գիրնան :

Այդ անդըջընդեղեան դասակարգին աշխարհը Քէստանէ-սուլուէն կը սկսի և Պալըլը կը վերջանայ :

Անոնց համար Բարիզն է միայն Եւրոպա, և Ամերիկա տեղ մը՝ ուր գիշերները ցերեկ են և ցերեկները գիշեր, ա՛յսքան :

Անոնք իրենք իրենց համար կ'ապրին և մենք ուրիշներուն :

Մենք մեր կեանքը ուրիշներուն ըրածը, ըսածը, մտածածը ուսումնասիրելով կ'անցընենք . նոյնպէս և անոնք, սա տարբերութեամբ որ մեր վնասածները Սողոմոն, Պօնաբարդ, Լօյի Ֆուլէր, Շաթպրիան, Բոքլէն, Միլթըն, Էսթիսըն, Ռընսն, Էմիլիէն

տ'Ալանսոն կը կոչուին — ուրիշ հաղարաւորներու քով — իսկ անոնց վնասածները քովի դրացիները, ետեւի փողոցը բնակողները և առ առաւելն թաղական աղաներն են :

Եւ այս ամէնը չարգիլեր որ անոնք մենէ աւելի ախորժակ չունենան և աւելի շուտ չմարսեն :

Մենք կրնա՞նք չգիտնալ թէ ո՞վ են Նաբուգոդոնոսոր, Լիսիաս, Ժիւլ Կրէվի, Չէլլինի, Իվէթ Կիլպէո, Լավուազիէ, Իպսէն, Հիպոկրատ, Ժիւտիք, Էնկֆէլլօ, Ֆրանսուա տը Սալ և շատ մը ուրիշներ, մինչդեռ անգին անոնց պատմութիւնը էջ մը միայն ունի, Խազէզ Ամիրան :

Մենք պէտք է գիտնանք թէ ի՞նչ ըրած է Մարիոն տը Լօրմ, որ 1650ին Շալոն-Սիւր-Մառնի մէջ մեռաւ, և թէ ի՞նչ կ'ընէ այն Մարիոն տը Լօրմը որ անցեալ օր պիտի քէթէ թէն վար ինկաւ Ավընիւ տէ գ'Ա. քասիայի մէջ ի Պուա տը Պուլոններ :

Անոնք՝ արդէն շատ խելացիի տեղ կ'անցնին երբ գիտեն թէ դիմացի Վերժինին շըրջազգեստին ստակը ո՞վ տուած է :

Գիտնալ պէտք ենք նաեւ թէ Բաթթիի դղեակը Քրէկ-ի-Նօս կը կոչուի և Եոքոհամա Ճարոնի մէջ տեղ մըն է :

Իսկ անոնք երբ կ'իմանան թէ այսինչը ո՛րքան կը պարտի նպարավաճառին, օրերնին պարապ տեղը անցուցած չեն համարիր և կը քնանան այն հանգիստ քունով որ միայն ներքին դոհացումը կուտայ :

Մեզի համար Միօզօթիսը — Ջիս մի մոռնար կը նշանակէ, անոնց համար երլանդիսի դեղ կ'ըլլայ :

Եւ դեռ հաղարաւոր օրինակներ մէջ կըրնայի բերել (եթէ գիտնայի թէ ձեզ չպիտի ձանձրացնեմ) անոնց և մեր մէջի տարբերութիւնն աւելի բացորոշ կերպով վեր հանելու համար :

Սակայն օրինակ մը եւս, թէեւ ինծի ոչ շատ նպաստաւոր, որ հրատարակելու փորձութեան չեմ կրնար գիմանալ, ի՞նչ ընեմ :

Անցեալ օր, պատկից դրացուհի Արմիկ տուտուն, սովորականէն տարբեր նազանքով մը բարի լոյս մաղթեց ինծի :

— Ինչպէ՞ս ես, տղաս :

— Շնորհակալ եմ, Արմիկ տուտու, դո՞ւն ընտոր ես :

— Փառք Աստուծոյ: Քա՛ խըյանէթ,
քեզի պան մը պիտի հարցնեմ, իրա՛ն է:

— Ի՞նչ:

— Խաղէթայի մէջ պան կը դրես եղեր:

— Է՛հ, պազի պազի:

— Ա՛մա էս կ'ըսէի քեզի համար քի ալ-
լըման տըղայ է: Է՛յ չիյտես ի՛նչ խրտար
քէֆ ըրի:

— Ան քու աղէկութիւնդ է:

— Քա, քուզում, քեզի իրիճա մը ունիմ:

— Ըսէ նայինք, Արմիկ տուտու:

— Քա չիյտես, երկու ամիս է սա մեր
մանչերուն խաղէթա պերէք կ'ըսեմ, էս կ'ի-
մանամ, խաղէթայի էրես տեսած չունիմ:
Աստուած քեզ դիմացս հանեց. ի՛նչ կ'ըլլայ
ինձի սանկ քանի մը օրը մէկ խաղէթա չնս
բերեր:

— Ինչո՛ւն է, գլխուս վրայ:

— Հէմէն վարձքդ Աստուծմէ կըտնաս.
կը հաւտա՛ս, իրեք ամիս է ձեռքս խաղէթա
անցած չունի քի սա ըռաֆներս շտկեմ չըտ-
կըրտեմ թէ, սանկ դիմացէն քէֆ ընեմ:

Հա՛, հա՛, ըրած գրականութիւնս բանի
մը կրնայ ծառայել եղեր:

Վա՛յ ինձի:

Երբ կը մտածեմ թէ — մարդուս ճաթիլը
կուզայ — մի եւ նոյն արեւի ճառագայթ-
ները թէ՛ Արմիկ տուտուն և թէ՛ իս կըլու-
սաւորեն քովէ քով, գրեթէ օդի մի եւ նոյն
զանգուածը կը ծծենք, քովէ քով կ'ապ-
րինք, և զմեզ զատող պատն է միայն որ
բանիմացութեան այդ ահագին անջրպետը կը
դնէ մեր երկուքին մէջտեղ, պատ մը սա-
կայն որ հակառակ իր տասը մատ հաստու-
թեան՝ արգելք չըլլար որ Արմիկ տուտունին
սենեակին մլուկները իմ սենեակս չխուժեն
խմբովին:

Ե. ԱԼՓԻՍԻ

ԱՐԵՒԵԼԲ

Օրաթերթ Ազգային, գրական և քաղա-
քական: — Բաժանորդագրութիւն՝ տարե-
կան Կ. Պոլսոյ համար 80 դր. գաւառնե-
րու համար 108 դր. և օտար երկիրներու
համար 35 ֆր.: Հասցէ՝ Ղալաթիա, Քաման-
սօ փողոց: ԱՐԵՒԵԼԲ հրապարակ կ'ըլլէ ա-
մէն օր, կէս օրին, խնամեալ բովանդակու-
թեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լու-
բերով ու նորադոյն տեղեկութիւններով:

ԵՐԲ Կ'ԻՄԱՆԱՍ

ՄԻ ԶԱՐԲԱՆԱՐ

— Կորիւն վարդապետին 6 ամիս փիլո-
նագրկութեան դասապարտութեան վերջը ծաղկ-
եայ փիլոն ընդունիր:

— Պատրիարքարանի սնուկին անձուկ
վիճակը իմանալէ՛ք վերջը պատժեցիկ ամսա-
կանին վրայ յաւելում ըլլալը:

— Ուսումնական հորհրդոյ առանց վկա-
յականի ոչ ոքի ուսուցչութիւն չընելու որո-
շումը տալէն վերջը ընողներուն հանդէպ ան-
սարբեր զսնուիր:

— Ազգ. Հիւանդանոցը կանոնաւոր վի-
ճակի վերածելու համար եղած աշխատու-
թիւնները լրագրաց մեջ կարդալէ՛ք վերջը
դարձեալ անկանոնութիւնը:

— Սկիւսարի քաղերը միացնելու համար
իրար անցնողներուն հիմակուան անսարբե-
րութիւնը:

— Խասգիւղի մէկ հոգիէ բաղկացեալ
Թաղ. Խորհուրդը եկեղեցւոյն մասակարարու-
թեան անկարող ըլլալէն վերջը ի նպաստ վար-
ժարանին բաւերական ներկայացում տալու
համար պատկանեալ իշխանութեան դիմելը:

— Ազգ. Հիւանդանոցի յիմարներուն ե-
րաժեշտութիւն սորվեցնելու խնդրոյն ջուրը իյ-
նալը:

— Սամաթիոյ Աղբատխնամ անդամոց
քիւր Մէհե աւելի չըլլալը:

— Շիւլիի գերեզմանասան մեջ մեռեալի
մը քաղման փորողչէֆ 250 դր. պահանջելին:

— Սամաթիոյ վարժարանին սնօհէին 1300
դր. ամսական առնելը և դաստիարակաց
300 դր. առնելը:

— Ն. Թօլայեանի, իր նպաստէն ձեռք
ձգած 30 ոսկիով երկու հաս մէքոհս բռնելը:

— Խմբագիր գիւպայէին մէկը հակառակ
24 մղոն տեղը պարզ աչքով տեսնելուն, ֆոն-
սեռին մեջ pour se montrer, նիքիլ ակնոց
դնելը:

— Սկիւսարի Աղբատխնամը իր արդէն
ունեցած դրամին վրայ բարբելու համար՝
ֆօնսեռ մը տալը:

— Ն. ձեռ խոնարհ ծառան՝ պալօին ե-
րեսէն առանց մէքալիկի մը յաջորդ օրը տուն
երթալը երբ կ'իմանաս՝ մի զարմանա:

Բերա

Ա. Է.

ԲԵՐԱՑԻ ՕՐԻՈՐԴԻ ՄԸ ՕՐԱԳԻՐԸ

Հին օրերէն մնացած է կարծեմ սա ուսմիկ նախապաշարումը թէ՛ երբ մէկու մը ականջը խօսի, անպատճառ իր վրայօքը կը խօսին սա ուսն:

Առանց կարեւորութիւն տալու այս մասիկի ենթադրութեան կամ ասացումին, ու առանց զգալու խախտանքը ականջներու, կը հաւատամ թէ շատեր կը հետաքրքրուին ինձմով և կուզեն հասկնալ ինքնութիւնս, մանաւանդ անոնք՝ որոնց վրայօք պատահութիւնը ունեցայ խօսելու այս էջերուն մէջ:

Սակայն ախոս որ կարելի չպիտի ըլլայ ինձ՝ գոհացում տալ իրենց, յարգելու նստատակը սկզբունքս, որ ամէն բանէ վեր է ինձ համար:

Այս անգամ դրուագ մը Ամերիկեան աղջկանց գոլէճէն:

Իրիկուն մը, ուշ տոհն տուն դարձիս, նամակ մը կը գտնեմ քննարկին վրայ, սիրուն պահարան մը, ու անմիջապէս գիրէն կը ճանչնամ ստորագրողը:

Սրտակից մտերմութիւն՝ Միս Տայեանն էր գրողը, հրաւեր մը հասցէիս եռամսեայ հանդէսին, զոր ստիւր են սարքել Հոմ Գոլէճի սանուհիք, ի ներկայութեան մտերիմներու, և ծանօթներու փոքրաթիւ հանդիսականներու:

Սկիւտարցի սիրած չեմ, սակայն Սկիւտարը իր գեղջուկ ամբողջութեամբ չեմ գիտեր ինչ մը ունի որ կարծես կը քաշէ, կը զիւթէ զիս:

Հետեւեալ օրը Չորեքշաբթի էր, լաւ կը յիշեմ, երբ փափաքեցայ անձամբ պատասխանել աղնիւ հրաւերին:

Գեղեցիկ չէնք զեռ հրոյ ճարակ չեր եղած այն ատեն:

Իրախախտ մէջտեղ կառուցուած չէնք մը, հրեշտակներով լեցուն, ամբողջ ճերմակներ հագած կը վազվզէին հոս հոն, երբ կէս օրը մէկ ժամ անցած հասայ հոն:

Մաքրութիւն, կրթութիւն և սէր թեւատարած կը հսկէին կարծես այդ դպրոցին

վրայ, դպրոց մը՝ որուն նմանը չունինք ու... չենք կրնար ալ ունենալ դժբաղդաբար:

Առաջին անգամ զիս դիմաւորողը կըլլայ Միս Պետրոսեան, համակրելի բարեկամուհիներէս մէկը, ինչպէս նաեւ Միս Բրիկեան, որոնք անհուն ուրախութեամբ մը կընդունին զիս ու կառաջնորդեն սալօնը, ուր արդէն շատ մը հրաւիրեալներ կան, բոլորն ալ դըպրոցին ծանօթները, աշակերտուհեաց աղգականները:

Հանդէսը սկսելու համար մէսիէօ Լանկէին կապսէին, որ չուշացաւ:

Ամէնքս մէկ սրահ առաջնորդուեցանք ու շնորհիւ Օր. Տայեանին զիս մեծարեցին այն Ֆօքսոյ նկարչութիւններէն մէկը, որ ուսուցչուհիներու, և էնթիմ հիւրերու յատուկ է:

Օր. Մանիկ Պէրպէրեան, նոյն տարին չըջանաւարտ պիտի ըլլար, տիպար հայրիկին շնորհալի աղջիկը, որուն հետ տեսակցելու պատիւը ունեցայ վերջէն, իր ֆիլքի ճախով երգեց գեղեցիկ կտոր մը դաշնակի և ջութակի ընկերակցութեամբ, և որ որոտնդոտ ծափերով գնահատուեցաւ ներկաներուն կողմէ:

Յաջորդաբար անցան հանդէսին թիւերը, մին միւսէն գերազանց ու հեշտալուր, և տեւեցին երկու ժամ:

Այս անցքը յիշելուս միակ ու միմիակ պատճառը քիչ մը վարը պիտի պարզեմ:

Երբ հանդիսականները տակաւ միկնեցան իրենց անկեղծ գոհունակութիւնը յայտնելով Տօք. Բաթրիքի, գեղեցիկ Ֆայֆօ ֆօքէ մը վերջը, մինք պահ մը առանձնացանք Միս Տայեանի շամպոբ բռնիկէն, Միս Պետրոսեանն ալ հետ:

Խօսակցութեան նիւթը գլխաւորաբար կը դառնար վարժուհիութեան շուրջ:

— Վարժուհի ըլլալը երջանկագոյն ասպարէզն է կըսէր ընկերուհիներէս Միս Պետրոսեան, երջանիկ եմ այսօր այս դրաղումիս համար...

— Հոմ Գոլէճի մէջ... կը հասկնամ ըսի

նրբորէն տուն տալով իրեն՝ մեր վիճակին հետ բաղդատութեան զնեղ իրենը:

— Կոչումը նոյնն է հոգիս, խօսք առաւ Միս Տայեան, հիմնովին հաստատելով իր ընկերունկոյն գաղափարը, երջանիկ է ան որ գիրով ու գիրքով կ'զբաղի ...

— Եւ ապերջանիկ բնականաբար ան՝ որ դպրոցական գծուձ էնթուրկներու մէջ կը լողայ ...

Եւ ալ բացուեցայ, թափեցի ինչ որ ունէի սրտիս մէջ, պարզեցի իրենց թէ, բոլորովին կը սխալին երբ համեմատութեան կը զննեն մեր Ազգ. վարժարաններու Օրինորդութիւնը՝ իրենց Գօ.էճին վարժուհիութեան հետ: Վարժապետի քսու ոտնձգութիւններ, տնօրէնութեան նստախրութիւն, հոգաբարձութեան անտեղի դիտողութիւններ, ծնողական տխմար ֆոխքիներ, ահա արդար վարձատրութիւնը հայ վարժուհիին ...:

Մեր կանացի ֆոզընին զմեզ տարաւ ընկերական ու ընտանեկան այնպիսի նիւթերու վրայ, ուր պահ մը մոռցայ թէ ստիպուած էի մեկնել Գոլէճէն Բերա դառնալու համար:

Տաք և բարենախանձ տեսակցութենէ մը բաժնուելու պատրանքին մէջ հրաժեշտ առի իրենցմէ, շնորհաւորելով զիրենք՝ վարժուհի բայց Հօմ Գօլէճի մը վարժուհի ըլլալուն, և խնդրեցի որ կրկնեն ինձ համար այն զոյգ մը բառերը որ մահազգերու տակ կը դրուի ...
priez pour elle !

Սկիւտարի վերջընթէր չողենաւին քովընտի խցիկներէն մէկը մտնալու վրայ էի երբ լսեցի ընդ աղօտ, երկու տեղացի երիտասարդներու քա calembourը:

— Մենք ալ հոս նստինք Արամ ... սա աղջիկը վարժուհի ըլլալու է, քիչ մը էլլեմիս ըլլանք, զաթը մարդ մարդասանք չի գայ ...:

Վարժուհիին հետ էլլեմիս ըլլանք ... ահա անոր ասոր գաղափարը մեր մէջ:

Ու տակաւին Սիպիլ յարգելի բարեկամուհիս զիս կայպանէ, այդ զաղիւր ասպարէզէն քաշուելուս համար:

Իրաւունք չո՛ւնիմ արդեօք ...:

ԶԱԶԱ

ԶՈՒԱՐԹ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՅԵ ՆԱՄԱԿԻ ՄԵ ԻՆՉՊԵՍ ԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԵՆ

[Կես-իրական պատմութիւն]

Այրի Տիկին Պայծառ և իր աղջիկը կ'ապրէին ... քաղաքին մէջ, հեռու՝ քաղքենի եռուզեռներէ և առօրեայ թոհուբոհներէ: Հաղիւ թէ տասնեակ մը տարիներ անցեր էին տիկնոջ ամուսինին տխուր մահէն ի վեր, և Պայծառ՝ հակառակ իր ծանրատաղաւակ զբաղումներուն, գրեթէ միշտ 10 տարի առաջուան մի եւ նոյն դեղանի արարածը մնացած էր, կլլուկիւք աղէկ պատառ մը, ինչպէս պիտի ըսէր Յ. Ալիբար:

Մէկ քանի տարիներ անցան ասանկ հեղասահ, մինչև որ հասաւ այն վայրկեանը, երբ աղջիկը իր հոգիին մէջ զինքը տանջող որդի պէս բան մը զգայ, սիրոյ առաջին կայծն էր առիկա, որ սկսած էր տակաւ ճիւղաւորուիլ աղջկան հոգիին կոյս աչքերուն մէջ: Մօրը խորաթափանց միտքը իր աղջկանը տարօրինակ շարժումներէն արդէն իսկ շուտով կռահած էր ամէն բան, և ինչո՞ւ չի հասկնար, քանի որ ինքն ալ իր անախտական հասակին մէջ նոյն ախուր փորձառութիւնը ունեցած էր, ինչպէս կ'ունենան մեզ նման շատ մը հասարակ մահկանացուներ: Նէ՛ ալ եւս բոլորովին կերպարանափոխուած էր, անանկ որ աղջկան նախկին զուարթ դէմքը հիմա մթաճնած էր և նայուածքը մեղամաղձոտ:

Որպէս զի աղջկանը հոգիին մէջ ծիւ արձակող սիրոյ այս զգացումները անախտալ ժամանակի մը մէջ չի պոռթկան, մայրը կատարեալ կանխազգացութիւնով մը դեղեցիկ գաղափարը յղացաւ իր աղջիկը ձեռքէն հանելու, խարճելու (*), թէեւ աղջիկը իր սեռին սլաքի բերող առաջին կարգի գեղեցիկ մը չէր, բայց սա ալ խոստովանելով, շատ ալ ջուրը նետուելիք չէր: Իր թխորակ դէմքը, մեծղի և մնամէջ գանկը, մինչև ուսերը

(*) Կը նշանալիէ հարս ընել, գաւառացի տգեղ աղջիկներու համար կը գործածուի ընդհանրապէս բացատրութեան այս եղանակը:

հասնող . . . երկայն մագերը անշուշտ իր ազդեցութիւնը մէջմէկ աստիճան կ'աւելցնէին, անանկ որ իր կապուածութիւնը ակնկալելով իրեն խորը թաղուած աչքին զոյգ մը դունտերը՝ միմեծիւն մէջ պլպլացող սեւ կառուրի մը դեղնօրակ աչքերը կը յիշեցնէին:

Տիկին Պայծառ՝ իր աղջկանը ունեցած ա'յսքան աչքառու թերութիւններուն հակառակ, իրեն բարեկամ մէկ քանի միջնորդ կիներու միջոցաւ վերջապէս յաջողեցաւ իր աղջկանը տուն-վնասայ մը գտնել: Ամուսնութեան այս ձեւը ընտրեց յատկապէս, որպէս զի իր կեանքի վերջին օրերուն մէջ միմեծիւն չի մընայ, ասկէ զատ առանկիւն սէտքերը հոգալու տաղտուկը յանձնէ իր աղջկանը ապագայ ամուսինին:

Պայծառ՝ որ իր վաղամեա ամուսինին իրեն ձգած համեստ դրամադրութիւն ասկիտովը և իր ձեռքի մանրմունք տախտակութիւն և իրեն արդիւնքովը կ'ապրէր ու կ'ապրեցնէր նաև իր . . . դիցուհի աշխիւր, միշտ հետամուտ օրուան նորութիւններուն, ուղեց որ իր աղջկանը հարսանիքն սլ եղական ըլլայ (քանի որ իր աղջիկն ալ եղական ազնւ մըն էր իր սեռին պատկանող գեղեցիկներուն մէջ): Հարսանեկան բոլոր արարողութիւնները — սկիզբէն մինչև վերջը — ուղեց որ նորօրինակ բան մը ըլլան, ամէնուն հիացում առթող:

Գաղափար մը տալու համար իր ըրած այդ անհարկի տարօրինակութիւններուն վրայ, հոս բառ առ բառ կ'ընդօրինակեմ իր աղջկանը ամուսնահանդէսին առթիւ իրեն ծանօթներուն խրկած հրաւիրագիրը:

«Տ.

«Այրի Տիկին Պայծառ պատիւ ունի աւեսելու (չիտակը շատ մեծ աւետիս) Ձեր ազնուութեան, որ իր աղջիկը 18 երկար տարիներ ամուսնի մնալէ վերջ՝ 19րդ տարիքին սկիսեալ վերջապէս չորս ոսկ պիտի ըլլայ (պիտի ամուսնանայ) վստիք գիշեր ժամը 6ին (ը. ք.), այնպիսի ասեմ մը երբ նոյն իսկ ահալաղները անգամ կը ննջեն:

«Եւ կը խնդրեմ որ Ձեր՝ էջմեի աւետարակին չափ բարձր ներկայութիւնովը բարեհաճիք պատուել ինքը եւ շօտեմ հանդեսներուն փայլը աւելցնել:

«Թուական . . . : Բաղաբ . . . : »

Աւելորդ է ըսել թէ հարսանեկան այս արտաքոյ կարգի հրաւիրագիրները մէն մի անհատի ուշն ու ուրուշը ներկայ չնաշխարհիկ ամուսնահանդէսին վրայ դարձուցած էին, և ամէն աստիճանէ մարդիկ ամէն կողմէ գունդառ գունդ հարսանեկան վայրը կը դիմէին, ոչ թէ իրենց պարտականութիւնները կատարելու մտօք, այլ իրենց հետաքրքրութիւնը յաղեցնելու համար լոկ, անանկ որ այս անհոջ հիւրերուն խուռներամ բազմութիւնը մեր տարօրինակ տիկինին ամէն ակնկալութիւններէն վեր բան մը եղաւ, և տան ծակն ու ծուկը ամէն կարգի մարդոցմով լեցուեցաւ:

Հոս փակագիծի մէջ չի մոռնամ յիշել թէ ճիշդ այս ոճով խմբագրուած թուղթ մըն ալ իր ամուսինին նախկին բարեկամներէն Մակարի խրկեց, այս վերջինը մօտակայ քաղաքի մը մէջ ամուսնի կեանք մը կանցընէր: Երբ սա՝ նամակը բացաւ, մեծ արմանքով և ամենայն դարմանքով կարդաց աշխարհի ստեղծագործութիւնէն մինչև հիմա նման չի տեսնուած այս հարսանեկան հրաւիրագիրը: Բաղաբավարութիւնը կը պահանջէր որ ինք այս արտաքոյ կարգի հրաւերը պատուէր եթէ ոչ իր խիստ բարձր ներկայութիւնովը, գէթ իր շնորհաւորական երկտողովը: Հետեւաբար մեր մարդուկը փութով իր առանձնատենեակը քաշուեցաւ և սկսաւ նոյնչափ զուարճալի ոճով շնորհաւորական նամակ մը գրել: Իր գրութիւնը վերջացնելու վրայ էր, երբ մօտակայ տունէ մը զուարճութեան մէջ եղող քանի մը երիտասարդներու՝ թուրքերէն սիրերգի մը վերջին տունը երգելը լսեց, և իր այս մտացիր վիճակին մէջ նամակը վերջացընելով ծալեց և թղթատարին յանձնեց:

Տիկին Պայծառ՝ որ այլ եւս զոքանջ մը եղած էր հիմա, հարսանիքին առաջին օրը ճիշդ 99 և երեք քառդ նամակ ստացաւ, 99 երեք քառդ ըսի, որովհետեւ երեք քառդը այցաքարդեր էին: Հանրագիտակի ազնիւ ընթերցողներուն և ուհիներուն ձանձրոյթ չի տալու համար այդ 99 երեք քառդ նամակներէն (քանի որ ամէնն ալ մի եւ նոյն գաղափարներն ու զգացումները կ'արտայայտէին) միայն մէկ հաար հրատարակութեան պիտի տամ, այն ալ մեր ամուսնի մարդուկին Մակարի նամակը: Տիկինը կարծելով թէ միւս

99. երեք քառու նամակներուն պէս այս վերջին նամակն ալ շնորհաւորական մի եւ նոյն բանաձեւներով խմբագրուած էր, հապճեպով այս նամակն ալ կը բանայ իր աղջկանը և փեսին ներկայութեանը ու սապէս կը կարդայ:

« Ազնիւ Տիկին »

« Չափազանց ուրախութեանս մարեցիք պիտի գար վրաս կարծես, երբ Ձեր խորախորհուրդ հրաւիրագիրէն իմացայ այդ բարի լուրը: Նրեւակայեցեք Տիկին (բան գործ չուշիք նէ) երբ Ձեր աղջկանը ամուսնութեանը առթիւ այսչափ ուրախանամ, մինչեւ իսկ մարելու աստիճան, հապա որչափ եւս առաւել պիտի ուրախանամ իմ իսկ ամուսնութեանս օրը:

« Կր շնորհաւորեմ Ձեզ՝ այս բերկրաւոր պարագային առթիւ, եւ կր թելադրեմ նորապսակ փեսան՝ Ձեր աղջկան հետ այնպէս հաշտ ապրիլ, ինչպէս ահալաղ մը իր բազմանդամ ընտանիքին հետ, եւ աղջկանդ՝ ըլլալ այնչափ համբերաւար, ինչպէս Յով երանելին: Կր մաղթեմ որ անոնք մեր լուսահոգի նախնիներէն Մարութաղայի չափ եւ աւելի ապրին, անելով անին եւ խնդալով մեռնին:

« Ըրանճա ալթուն սինի,

ձանըմ փեկ սեվի սե'նի:

« Ձեր ամուսնոյն նախկին բարեկամը՝

« Մակար

« Թուական...: Քաղաք... »:

Եւ ինչո՞ւ թուրքերէն սիրերգին այս վերջին երկու տողերը:

Ընթերցողը անշուշտ կռահեց թէ երբ մեր մարդուկը իր առանձնաստիճանին մէջ հրաւիրագիրին շնորհաւորական մը կը գրէր, վարկենական մտադրութիւնով մը զուարճանալու վրայ եղող դրացի երիտասարդներուն հրգած սիրերգին այս երկու տողերն ալ տեղաւորուցած էր իր նամակին մէջ անգիտակցաբար:

Եւ երեւակայել հիմա տիկինին բարկութիւնը և նորապսակ ամուսին ապշութիւնը:

* * *

Վերջին լուրերը կը հաւաստեն անուղղակի կերպով կնքուած տարօրինակ ամուսնութիւնը՝

Տիար Մակարի

Եւ

Այրի Տիկին Պայծառի

ՍԵՄԱԹԻԿՍ

ԻԶՄԻՐԵԱՆ ԹՂԹԱՆՅՈՒԹԻՒՆ

ԱՂՔԱՏԱՍԵՐԻՆ ԵՐԵՎՈՅԹԸ

Բարեգործական, աշխարհիկ, եղանակին շատ սիրուն հանդէսներէն մէկն եղաւ այս կիրակի օրուան Աղքատասէրին ի նպաստ սարքուած պարահանդէսը Հռիփսիմեանի ընդարձակ ու պերճ սրահներուն մէջ:

Աղքատասէրի անդամուհիները, այնքան նազելի, այնքան համակրելի, այնքան համով աղջիկներ են, իրենց կատարած գործը այնքան բարի, այնքան օգտակար ու գեղեցիկ, իրենց տուած երեկոյթը, այնքան յաջող, այնքան սիրուն եղաւ որ, ապերախ տուրքիւն պիտի ըլլար իմ կողմէս եթէ այդ հանդէսին առթիւ յիշատակութիւն մը չընէի Հանրագիտակի էջերուն մէջ: Եւ վերջապէս այդ աղջիկները աչքս չի հանեցին եթէ հրաւեր մը զրկեցին ինծի... à l'oeil:

Պահ մը այս միջոցիս աչքերս կը գոցեմ, աչքիս առջեւ բերելու համար կիրակի օրուան երեկոյթը:

Աղքատասէրը՝ շատ աչքաբացութիւն ըրաւ իր հանդէսը սկսել տալով մանկական պարահանդէսով մը: Աչքի չի գնաց այդ պղծ տիկները, ո՛հ, ի՞նչ աղուոր կը պարեն կոր: Աչք կուղէ տեսնելու համար:

Եթէ այդ մանկական պարահանդէսը բանի մը չծառայեց. բայց գոնէ Իզմիրյիներուն յիշեցուց թէ՝ աստեղով... Սմբաղ Բէյաճեան անունով մէկը կար. — աչքը կը խաղա՞յ կոր արդեօք այս պահուս — որ մեր պլախիններուն աչքը բացաւ, գիրկընդխառնումի հրապոյրին մեղրը քսելով մանկական շուրթներու վրայ:

Այս գեղարուեստ ողաքները՝ աչքի զարնող վարպետութեամբ մը, հիմակուց իրարու աչք կընեն կոր, կը հաւատա՞ք ասոր:

Աչքը չի fkor այ այդ Սմբաղին, ինչե՛ր սորվեցուցեր է ասոնց: Մեր ծնողքներուն աչքը լոյս իրենց զաւակները, այդ տարիքին մէջն իսկ, պարի մէջ այնքան վարժութիւն ունին որ, եթէ այդ վարժութեան կէսը ձեռք առնեն... Թուաբանութեան մէջ, զոր օրինակ — աւելի դիւրին օրինակ մը

կրնա՞յի տալ — օրին մէկը աչքերնին կրնան գոցել հանդարտօրէն, այն վատհուծեամբ թէ բարեկիրթ անդամներ աւելցուցած են ընկերութեան մեծ ընտանիքին վրայ:

Պ. Սմբադ պար սորվեցուց իրենց զաւակներուն, աչքերնին չի հանեց եւ, հետեւաբար իզմիրցիները ապերախտ պիտի գտնուին, եթէ օրին մէկը արձան մը չի կանգնին Պ. Սմբադը ներկայացնող: Մարմարիոնէ Սմբադ մը, որուն մէկ ոտքը սանկ մէկտեղ կակած պէտք է ըլլայ և միւսը օգին մէջ, իբրեւ թէ բացը քարը կը պարէ կոր:

Աչքառու ճշմարտութիւն մը խոստովանելու համար, պէտք է ըսեմ որ միւս գիշերուան երեկոյթէն շատ գո՞ մնային՝ թէ մեծերը և թէ պզտիկները:

Ժամը չորսին սկսաւ մաքիմեն, քաշիլով մը, զոր պարեցին Ծէն 7 տարու երկսեռ տղաքներ, բոլորն ալ ֆօ քիւմ:

Խարտեաչ խոպոպներ վարդագոյն այտեր, գոյնզգոյն կերպաններ, մազերու մէջ գետեղուած ծաղիկներ, ժապաւեններ, այս գունազեղ տխուր մէջ կը պարեն ու կը պարեն այդ ապագայ ուսուցիչները, մեր ապագայ թաղականները, մեր ապագայ հարսնացուները և մեր ապագայ քաղաքակիցները:

Մայրիկները կը ժպտին, հայրիկները պէտքերնին կոլորեն, վարժուհիները կը ցնծան, հանդիսականները կը ծափահարեն, միւզիքը կը գողայ, և ամուրիները մէկ ժամ առաջ լմննալուն կսպասեն:

Պէպէտները և իրենց վարժապետը խոնարհաբար իրենց քիւմէն մը ետք կանհետան և մեծ պէպէտները սրահը կը գրաւեն:

Ժամը 7¹/₂, ատկէ վերջը ի՞նչ եղաւ: Եթէ հետաքրքիր էք՝ կարդացէք անցեալ տարուան «Մանգումէ»-ի գրած քրոնիկներս, եթէ կուզէք ասկէ հինգ տարի առաջուանը, կամ եօթը ութը տարի առաջուան նկարագրականներս, եթէ պահած էք. տասը տարի ետքը գրելիքս եթէ... համբերութիւն ունիք:

Ամէն տեղ ու ամէն ժամանակ պարահանդէսները մի եւ նոյն են:

Զիրար կը գրկեն, վախին կը յաջորդէ pas de quatre, քաթրիլին՝ լանսիէն, իրարու արդուզարդին կը նային, թեւ թեւի պտոյտ, շունջերը իրար կը խառնուին, ֆլիք հոս,

բամբասանք հոն, սխառութիւններ մութ անկիւնները, ֆրաքով կառածներ, գեղեկ միւս սիւներ, կոտրտուող աղջիկներ, քնացող պառուներ, ձեռքերնին գրպաններուն մէջ պտրտուող լրագրողներ, պիւֆէն, շամբանեան, անուշեղէնները, սանտուիզ, լէմոնադ, թէյ, քօնեակ, միւզիք, գնդասեղ, քամէլիա, կրպո՞քօ, կալօք, և ... էօլիւշիւն քէօրին:

Ահա ի՞նչ է պարահանդէս մը:

Օր. Տիւպէր դադարներուն շնորհալի վեհանձնութեամբ մը ծաղիկներ կը վաճառէր ներկաներուն:

Օր. Տիւպէր, իր անզուգական գեղեցկութիւնովը — ուրպէնսէ գծագրուած գլուխ մը պաշտելի դիմագիծերով, որ վեհօրէն կը բարձրանայ ուսերու ամենէ հոլանիին վրայ, գեղեցկութիւն մը՝ որ կարծես ընդօրինակուած ըլլայ Վէրօնէզի մէկ պատկերէն և կամ Ռաֆայէլ Սանցիօի մէկ նկարէն կեանք առած ֆօթօնարինա մը մէկ բառով:

Ինչ հարկ կայ գրիչս չարչարել դադափար մը տալու համար ձեզի այն գիւթիչ տպաւորութեան վրայ. զոր Օր. Տիւպէր գործեց: Պզտիկ օրինակ մը:

Պատի մը անկիւնը պահուած հարուստ ծերուկ մը կը նշմարեմ որ մշտեղ չեղնէր... քանի մը զրուշ տալու վախէն:

Կը խնդրեմ Օր. Տիւպէրէն որ ծաղիկներու կողովը առնէ և խնծի հետ գայ:

Երկու ոստուամով դէմ առ դէմ կը դրտնուինք ծերուկիս հետ:

Մէյմը ծաղիկներուն կը նայի. և երկու անգամ ալ զայն ներկայացնողին: Անմիջապէս առանց ժամանակ կորսնցունելու ձեռքը գրպանը կը դնէ և փայլուն դրամ մը կը նետէ կողովին մէջ, առանց ծաղիկը առնելու:

— Ի՞նչ աճապարանք, դիտել կուտայ Օր. Տիւպէր:

— Ելեկտրական լոյսին դիմացը շատ չեմ կրնար կենալ կաւելցնէ ծերուկս, որմէ շատ աւելի դրամ սպասելու իրաւունք ունէի, բայց այդքան galanterie, երբէք...:

Իսկ գալով ներկաներուն՝ տկար յիշողութեանս կրթնած հազիւ կրնամ քանի մը անուններ միտքս բերել մեր գեղեցիկ սեռը ներկայացնող:

Այդ գիշեր իրենց զուարթուն և գոհ և բեռնոյթէն դատելով, ամենէն շատ succès ունեցողները կը նկատեմ. Օրիորդք Աննա Պարսիզպանեան, Հեղինէ Հարենյ, Չապէլ Չաքրեան, Մարի Տիլպէր, Մարի Յովնան և Զեյնեան — ոչ Միքիճան Պարսամեանինը — ֆերուտէ Արմենակ և Վիքթոր Կոստանդ:

Placé aux jeunes! քսաներորդ դարուն և հիմակուան պարահանդէսներու նշանաբանն է այս, որուն հետեւելու համար ոխ պահելու չեն ինծի այն միւս օրիորդները, որոնց անունը չի տալու համար չեն դադարի մեր երեկոյթներուն կեսիկի հերոսահայերը ըլլալէ:

ՄԱՍԻՐԹ

Ա Ր Ա Մ Ը

[ՖԱՆԹԱՅԻ]

Դիւեր է: Տիկինը եւ պարոնը անկողինէն ԼԵ: Տիկինը կը բնաւայ, պարոնը նսած է անկողինէն մեջ եւ սիկաւ մը կը պլըրէ մտածկոս: Տիկինը կը զանաւնէ: Պարոնը ականց կուսայ: Տիկինը զանաւնցանք որոնց կը լսուի: Պարոնը ալ աւելի ականցը կը մտեցնէ տիկինը:

Տիկինը. — (Կը զառանցէ) Արամ ... Արամ ...

Պարոնը. — Հէ' ... Արամ մի' ...

Տիկինը. — (Կը շարունակէ զառանցի) Արամ ... եկո՛ւր ... իմին անուշիկ Արամ ...

Պարոնը. — Արամ, սակայն ո՞վ է աս Արամը, ըսել է Արամ մը գոյութիւն ունի, որ արձակ համարձակ տունս կը յաճախէ: Ա՛խ, աս անգամ գողը բռնեցի: Վերջապէ՛ս կասկածներս իրականութեան փոխուեցան, ալ ձեռքէս ազատելիք չունի ատ Արամը: (Տիկինին դառնալով) Վաղը, վաղը կը տեսնուինք տիկին, վաղը կը հասկնամ նաեւ ատ Արամին որ ... որ պատիւիս հետ կը խաղայ և կամ թէ դուն ես որ կը խաղցնես, քեզի՛ անհաւատարիմ կին: Ըսել է մինչեւ երէկ զիս կը խաբէս եղեր և ես ալ ապուշի պէս կը խաբուիմ եղեր: Արամ հէ': Սակայն անպատճառ տա Արամին հետ թղթակցած ըլլալու է, աստի՛ն անդին վնասուեմ, թերեւս

ապացոյց մը կը գտնեմ, նամակ մը, ա՛խ եթէ գտնեմ, եթէ գտնեմ, գո՛րծ ունիս տիկին, ձգէ որ եթէ գտնելու ալ չըլլամ՝ նորէ՛ն գործ ունիս: Պատիւս, անո՛ւնս ... ապարտուած, հէ՛ տիկին, կայնէ՛ կայնէ՛ (անկողինէն վար կիջնէ և ճրագը առնելով կսկսի քննօլին դարակն՝ ըր բանալ):

Տիկինը. — (Կարժնայ և պարոնը դիտելով) Ի՞նչ կը փնտռէ արդեօք ...

Պարոնը. — Ծուռն շան որդի, հո՛ս բան մը չկայ, թերեւս իր անտուկին մէջ պահած է, ա գահով ըլլալու համար, սակայն պէտք է անտուկը բանալ, բայց բանալիները, (բանալիները կը տեսնէ քննօլին վրայ) օ՛հ, բարեբաղդաբար բանալիներն ալ հոս են, Արամ հէ' ... (բանալիները կառնէ, քանի մը քայլ կառնէ մինչեւ դուռը, բանալիները ձեռքէն կը սահին կիսնան, պարոնը գլուխը տիկինին կը դարձնէ):

Տիկինը. — Ի՞նչ է ատ, ի՞նչ կը փնտռես, իմ անտուկիս բանալիները քեզի՛ ի՞նչ ...

Պարոնը. — Ինծի ի՞նչ մի', ապացոյցներ պիտի վնասուեմ որ գլուխը ապահով ջախջախեմ, Արամ հէ', գործերնուդ կուգայ տիկին:

Տիկինը. — Արամը ո՞վ է որ ...

Պարոնը. — Օ՛հ, մեղք, խեղճ կին որ չճանչնար Արամին ով ըլլալը, քիչ մը առաջ զառանցեցիր տիկին, և Արամը կը կանչէիր, եկո՛ւր, կըսէիր, անուշիկ Արամս, ատ Արամը և քեզի պիտի բղքտեմ, ըսէ՛, ըսէ՛, և չո՛ւտ, ո՞վ է ատ Արամը ...

Տիկինը. — Հա՛, հա՛, հա՛ ...

Պարոնը. — Կը ծիծաղես հէ', թերեւս մինչեւ երէկ զիս խաբած ըլլալուդ համար կը ծիծաղես, վախճի՛ր բարկութենէս տիկին ...

Տիկինը. — Կուգե՛ս, ըսե՛մ, Արամին ով ըլլալը ...

Պարոնը. — Ըսէ՛, ըսէ՛, որ ապահով գործեմ ...

Տիկինը. — Արամը ... Արամը ...

Պարոնը. — Արամը ...

Տիկինը. — Մեր նոր դրացիին տղան է ...

Պարոնը. — Տղան մի' ... ա՛խ ...

Տիկինը. — Որ շատ գեղեցիկ է ...

Պարոնը. — Գեղեցիկ ... ա՛խ ... վաղը ...

Տիկինը. — Եւ դեռ հոգիւ երկու տաբեկան կայ ...

Պարոնը. —

Վ. ԳԵՐԵԳՆԱՅԱՆ

ԱՂԶԻԿՏԵՍԸ ԲԱՂՆԻՓԻՆ ՄԷՁ

[ՄՈՐԵՄԵՐԿ ՅՕԴՈՒԱՄ]

Ուրիշ ալ կը գտնայ կը գրէ լակոսը . . . :

Ահա վարձքս, ահա քաջալերութիւնս և ահա գնահատականս, զոր կը շնային հասցէիս, երբ շարթէ շաքաթ ձեռք կ'առնեն Հանրագիտակը ամէն անոնք՝ որոնք զուարթութիւնը և զուարճութիւնը թերթէս կըսպասեն փոխան . . . Մէկ զրուշի :

Ո՞ւրիշ կը գտնամ ու կը գրեմ . . . ասիկայ եւ ալ չեմ գիտեր, Արարհամ Այվազեանն ալ չը գիտեր, մեր գիւղին բժիշկն ալ չգիտեր, սակայն և այնպէս ամէն շաբթու պիտի տեսնուի կիսեր :

Պէտք է խոստովանիմ որ, յօդուած գրելու համար շապիկ փոխելու աստիճան չեմ քրտնիք, ոչ ալ մազերս փետտելով մուսաները կիկօները օգնութեան կը կանչեմ : Թերթ մը թուղթ՝ սուր տաշուած մատիտ մը, տասը հատ 100նոց զլանիկ բաւական են ինձ համար կանացի ճալածուլա աշխարհը բարխանա չորպասի դարձնելու, իրենց վրայ համարում ունեցող օրիորդներն ըստխոգի պէս խաշելու կամ կարմիր, և կամ փքուոյց միւսիւններուն պէս կրծիկ տալու համար and so fore !

Պէտք է ըսեմ որ նիւթերը՝ դպրոցական մանչուկի մը ետեւէն վազող դառնուկին նման են ինձ համար, ես կ'երթամ անոնք ինծի կը հետեւին :

Նա՛, այս շաբթու նիւթերու սովէ բըռնուած խաղք պիտի ըլլայի՝ եթէ կանայցի աշխարհին մէջ արտաուոյ նորութիւն մը ալ կանջէս մանկելով գրչէս չեղլար հոս այս սիւնակներուն մէջ :

Ուստի մտիկ ըրէք :

Մինչեւ հիմա գիտէինք, զիտէիք, գիտէին որ մեր մէջ աղջիկները ծախուելու համար՝ չեմ ըսեր թէ Գուլէ-գարուի սալայատակներուն վրայ՝ այլ տունը բռեկանքապալ մէկ սենեկին մէջ ի ցոյց կը դրուէին ամէն անոնց աչքին՝ որոնք կ'ուն բէշով պոխտէ

գլխորով և ալ-նորբուն քերայի կառքով մը քօքօն քօքօն կուգային լրջօրէն կատարել իրենց աղջիկոտեի պաշտօնը ի հաշիւ փեսայուն, լաւ կամ գէշ տղաւորութիւն մը հասցնելով անոր :

Սակայն լիլիկը տեսէք թէ ինչ նորութիւն բերած է այս տարի, որ նորութիւն մը ըլլալէ աւելի անօրէնութիւն մըն է ըստ իս, և ըստ ամէն անոնց՝ որոնք ամէն պարագայի հօբ չեն ըսեր :

Պաշտոյ բաղամամարդ և բաղամատուն, այլ ոչ բաղամածին արուարձանէ մըն է ձեր ընթերցումը :

Տեսարանը կ'անցնի հրեայ բերեղակի մը կրպակին մէջ : Երկու կիներ թէղկեահին մօտ կը տեսակցին, մինչ շուտիկ բերեղակը ի զուր կը շարժէ կզակը :

— Աղեկ կըսես հոգիս, արեւուտ մեռնիմ, չիտալ ըլլալուդ վրայ շիւթէ չունիմ, ֆախաթ տղաս կուղէ կոր քի մէյ մը վուճուտը տեսնալ . . .

— Էյ աս ալ լսած չէի . . . մեղայ տէր Յիսուս, ֆարազայ չիչէկէն խալպուր դառցած չէ աղջիկս . . .

— Հա՛ սոմա, մէյմը մօտէն տեսնում նէ մեղքը թաթխուած չիմ ըլլա՞ր ես . . . հէմ անոր խօլայը կայ, օր մը բաղնիքը թէրթիպ կընենք, դուք ալ հոն կըլլաք միւրք ալ, իշտէ հոնտեղը կը տեսնամ, անոր կէօրէ տըղուն էնանէսիովը նախը կընեմ . . . չըլլա՞ր . . .

— Քուրուկ մինչեւ մեր օրին միլեօններով աղջիկ կարգուած են ամա, մեղայ քի մէկ հատին չըպլախութիւնը մուայէնէով եղած ըլլայ, աս իմնինս եկաւ նէ տասնիկ եղաւ . . .

— Ի՞նչ ընեմ քուրըս, հիմաճուկուանները քիչ մը թիթիղ կ'ըլլան կոր, տղան կ'ըսէ կոր քի, ինչ պիչիմ վուճուտ ունենալը, լոնքը, պոյը, հաստութիւնը, թեւերը, կէօքսէրը, բիւթիւն նայիմ տէ իրեն զուրցեմ . . .

— Էյ խաչոր վրանիս Աստուած կայ, առ տար էզիյէթըն ալ մարդուս տիւշմանը պիլէ թէքլիֆ չընեմ ...

— Քա ճանրմ հախ ունիս, քար պերնիս, քուկիւնիդ համար ըսել չեմ ուզեր ամա, հերոս աղջիկ մը կարդուեր է տէ, թեւին վրայ սըռաճա ունի եղեր, մէմէյին մէկն ալ տէրի պէս կախուած է եղեր տէ, քուռչ կը թխէ եղեր, սօղոսմտան օւթան ելեր է ...

— Էյ դուն աղեկը կը ճամշնաս իմ աղջիկս, սիւլիւնի պէս, առքայի թանէի խտար խուսուր մը չունի ...

— Հա', գիտեմ անանկ ըլլալը ամա, մէյ մը չափը առնեմ տէ, իրեն ըսեմ հասկընայ, հէմ կէօքսըս կէռէ կէռէ, չիւնքիւ կիրկս տանտան ըրած եմ ա' իկա, ես մէջով դուրսով աղւոր մը գիտեմ ...

Փերեզակը տեսնելով որ այս երկու տուտունները փոխա՝ակ առուծախի իրենց ընտանեկան հաշիւները կը մաքրեն, ձեւով մը ճամբու կը դնէ զիրենք, ու երկուքն ալ իրար համոզելով՝ կ'որոշեն չորեքշաբթի օր բաղնիքը միանալ:

* * *

Տիկին Զիւմրիւտ իր աղջկանը՝ Նունեային հետ ժամ առաջ եկած անկիւն մը գրաւած էին դուրսը, կանանց հանուելու սենեակնէն մէկուն մէջ, ու պոխճանին բացած կըսպասէին միջնորդ Կիւլիւկին որ կ'ուշանար:

— Ինծի 'այէ Նունիկ, կ'ըսէ մայրը, ոտքերդ լուացի՛ր մէյ մը, աղտոտ չըլլար ...

— Թէմիդ է տուտու, ամա խօլթուխնէրուս տակը քիչ մը մախաւամիշ ընես նէ գէշ չըլլար ...

— Քա Նունիկ, գիտես քի մասը աչքիս տանա չիշման կ'երեւաս կոր ... նայէ քի ինքիդինքդ կուստուլու ցուցընես ...

— Բէք աղէկ ամա տուտու, կընիկը իս հո՞ս պիտի տեսնայ չէնէ ներսը ...

— Ներսը եւովրում ներսը, մօրէ մերկդ տեսնալ կուզէ կոր քի էնանէսիովը երթայ մանչուն նախ ընէ ...

— Ախ տուտուս առ գործը պիտի ըլլայ աճալ ...

— Վուճուտդ գիտէ աղջիկս, ինչ ըսեմ նէ պօշ է, վուճուտիդ չափերը տղուն ուղածին պէս ելլան նէ հիշ չիւրհէնիս չի մնար ...

— Կոնակիս ետիւրին լէքէն դարար ունի աճապա ...

— Նայէ քի վիրա սօլիդ սաղիդ ֆըռըլ ֆըռըլ դառնաս տէ, աչքէն սըվըշտըրմիշ ընես ... քեզ տեսնամ Նունիկս, գործին բանը քու վրայդ է ...

Մինչ այս մինչ այն՝ փեսին կողմէն տղուն մայրը, թէյլէն և միջնորդ կինը, երեքը մէկ կուգան կը հասնին և սովորական խօսակցութենէն վերջ՝ բոլորը մէկ կը հանուին, խավլաւները կը փաթթուին ու ներս կը մտնան, այսինքն բուն բաղնիքը:

— Աֆ կ'ընես խնամիցուս, կ'ըսէ տղուն մայրը, ասիկա քիչ մը չառքաշիւ եօլ է ամա, տղաս թիթիդ ըլլալուն ասանկ սահմանուեցաւ ...

— Զարար չունի քուրուկ, մալէս չիւբէ չունիմ քի հոգ ընեմ ... իշտէ օթան է, մօրէ մերկ, չորս դին նայեցէք, մէրճիմէկի խրտար խուսուր մը գտնալու ըլլաք նէ, մալը իմա է ...

— Աստուած պահէ, հիմակու հիմա բան մը չերեւար կոր, մէյ մըն ալ ալըճը կէօզիւով նայինք տէ, իշալլահ խըսմէթէնէ կըլլայ ...

Միջնորդ կինը գործի կըսկսի:

Նախ կոնակին ի վար ձգուած մազերը ձեռք առնելով՝ սանկ կշռելու պէս կ'ընէ, թէլ թէլ կը բանայ, չէյթան պէզի գնելու պէս փտտուկ ըլլալը հաստատուելու համար, սանկ կը քաշէ ու տղուն մօրը դառնալով,

— Կը տեսնաս կոր ես, ծովերու պէս մազեր ունի, սըխ, խուճալ, թէլ մը ճերմակ չիդայ մէջը, թահմիտով երեք հարիւր տիրէմ կայ, մէյ մըն ալ պօյը չափեմ ըսելով ձեռքին մէջ գտնուած մէզիւռան կը բանայ ու թէփէյէն բռնելով մինչեւ ծարը կը չափէ, — եէթմիշը օխտը սանթիմ ...

— Վախ վախ վախ, տղաս եէթմիշը ինը, բէք բէք եէթմիշը ութը կուզէր կոր ... կ'ըսէ տիկին մայրը, բաղնիքին տաքէն մատ մատ գլխու պօյսն ձախտան ի վար վաղցընելով:

— Աման դուն ալ, երկու սանթիմը բան մը չէ, տանա թամ թէփէյէն չի բռնեցի մէզիւռան ...

— Էյ բէք աղէկ, ճիտին լանքը, կէռտանը չափէ նայինք ...

— Քսանը ութը, աղէկ միտքդ պահէ...
— Օմուղներուն լանքը...
— Սա խալիլուդ վար առ աղջիկս նա-
յիմ, ըսելով՝ կսկսի ուսերուն չափը առնել.
— էստունը ութը...

— Թամ օմուղ պաշիէն բռնեցիր ես...
— Նա՛ իշտէ, դուն ալ նայէ քի ետքէն
լախըրաք չեղլայ...

— Նէ իսէ, անկէ վար ինչի նայինք...
— Ինծի նայեցէք, խօսք կ'առնէ աղջը-
կանը մայրը, խառապին խանութը պիլէ ա-
սանկ ողջումձեւով միս բազարը չըլլար,
դուք ինծի ըսիք քի մինակ խոսուողները
պիտի նայինք տէյի, հիմա ելեր էք...

— Հա ամա, քուրուկ, տղաս ըսաւ քի,
չափերը առէք տէ ինծի խապար տուէք
տէյի...

— Մեղայ, չօք չէ՛յ... Փարազա չա-
փերը առնել տայ տէ, աղջկանս մեռելին
մատուկ չինել չպիտի տայ ես...

— Կեցիր ճանրմ, կէօքսերուն չափերն ալ
առնենք տէ... Նա՛ կը տեսնաս կոր ես,
եաֆա բօթթուգալիէն քիչ մը չէքէրէկ,
ետքէն ինծի մահաճա մի դնէք...

— Ան հիմա պզտիկ կը տեսնաս կոր տ-
մա, ճինսերնու մէջը բիւթիւն խոշոր են,
նա նայէ ինչ խրտար պօշ տեղ ունի... ան
կուգայ կը լինայ, կ'ըսէ մայրը...

— Տղաս ատ թառափին չատ մէռաքը
է... ըսաւ քի, ատոնց տիւաթ ըրէք...

— Լուսահողի էրիկս ալ մէռաքը էր
ամա, կարգուելէն ետքը չի վայեցուց, քը-
սան տարի ըսին նէ ասանկ երեսի վրայ ձը-
գեց գնաց խողերը առաւ սլառկեցաւ...
Աստուած ողջութիւն տայ տէ իրար վայե-
ցունեն եօխայ...

— Ան չէ ըսելիքս, ատ չիտակ է, հախ
ուսինս ամա, քիչ մըն ալ խոշոր ըլլային նէ...

— Տղատ սիւտծիութիւն պիտի ընէ քի
խոշորը կը փնտռէս կոր, օրը ութը օխա կաթ
տուողները Խըռմի կովեր են, ինսան օլանին
աս տար կ'ըլլայ իշտէ...

— Էյ բէ՛ք աղէկ ճանր՛մ, մի խըռտտիր,
կ'ըսէ մայրը, մէջքին չափն ալ...

— Քառսունը հինգ...

— Օ՛... ատ չեղաւ...

— Ճանրմ երեկ իրինկուն նօնուտու կահ-
նին իշտալը կերաւ տէ ան է, մարսելու ըլ-
լայ նէ չորս մատ տահա ֆառիս կ'ընէ...

Ու մինչ այսպէս մէջքին լայնքին վրայ
կը խօսակցէին, յանկարծ՝ հակառակ Օր. Նու-

նիկին ըրած զգուշութիւններուն, եախըին
հետքը աչքի կը զարնէ:

— Ա՛...

— Ա՛... ա՛... ա՛... ա՛...

— Քա ի՛նչ եղաք, ի՛նչ եղաւ...

— Ա՛... ցըք... ցըք... ցըք... ցըք...

— Պէ ճանրմ ես ալ հասկընամ եղածը,
դող կ'ելլամ կոր կ'ըսէ, աղջկանը մայրը
չգիտնալ ձեւացընելով...

— Չէ՛... կոյէ՛ կոյէ՛ աղջիկս... ըլ-
լաւու բան չէ...

— Ճանրմ հայտէ գոցել տամ, ատ խօլայ
է, չեղաւ նէ չեղաւ, ծովը նետելու չեմ աղ-
ջիկս, ֆախաթ գործը հասկնամ, ի՛նչ տե-
սաք...

— Ի՛նչ պիտի տեսնանք, խոսխոճաման
քուաճա մը...

— Սըռաճա՛... Աստուծմէ գտնաք հէ-
մէն, ո՛ւր է նայիմ սա սըռաճան ցուցուցէք,
հա՛ նայիմ... աղջիկս բուլլուխ բուլլուխ
ընեկնէք ետքը վրան ալ իֆթիրա՛ կը նետէք
կոր...

— Նա կէօղլում... քէօռ չեմ իրացու-
նէ... աս լէքէն ինչ է...

— Հա՛... ասնկ մէյ մը նէֆէս առնեմ...
Նունիկովս ծոցուոր էյինէ, կռնակս ի վար օր
մը խախվէ թափեցաւ, իշտէ ատոր նշանն է...

— Աս խախվէի բան չէ քուրուկ, աս
տիւզճէ խոսուոր մըն է...

— Էյ հայտէ ըսենք քի խոսուոր մըն է,
հիմաճուկ ատ պտըտիկ խոսուորին համար
գործը ե՛տ պիտի ձգէք...

— Էյ ինչու սուտ ըսեմ... չպիտի ըլ-
լայ... ամֆ կ'ընես...

— Վա՛յ... ասանկ հա՛... աղջիկս
պաղնիքին օւթան տօլապ պէկիբի պէս չըպ
չըպլախ ընէք չորս դիին չափերը առնէք,
աղտոտ չորապի պէս մէջը դուրսը տառցու-
նէք տէ, անկէ ալ պզտիկ լէքէի մը համար
չեղաւ հէ՛... Աստուծմէ գտնաք...:

Մինչ տիկին մայրը այսպէս լեզուին կու-
տար, արդէն անոնք կը պատրաստուէին ժող-
վըտուիլ...

— Ինծի նայեցէք, իմ աղջկանս կռնկին
օւթան լէքէ կայ տէյի չեղաւ կ'ըսէք կոր,
աճապ ձեր անյման միւսին հանուըցնեմ տէ
տակը վրան նայիմ նէ ինչ խապուխ կապած
եարաներ օւթան կ'ելլան... ատ ծառքիդ
մէգիւռանս առ տէ, առաջ խելքդ չափէ ետ-
քէն ալ փրկիչը... բէշտիմալդ կապէ քա
Նունիկ...:

Խուպպիկն համեկն լսելով գրեց

ԼԻԼԱ

ՔՐՈՆԻԿ

Շարաթական Գրոնիկիս անցնելէ առաջ կողքեմ երկու խօսքով շնորհակալութիւնս յայտնել «ԱՐԵԻԵԼՔ» պատուական օրաթերթին Տիար Գրաւերին, որ ինծի մեծ պատիւ մը եղող դիւրիմացութեամբ մը զիս մեր անգուգական ԼիլԱն կարծած էր:

Բայց կը յիշեցնենք մեր ազնիւ բարեկամին, որ մենք դեռ շատ հեռու ենք ԼիլԱն չէնչող գրիչը գործածելէ, թէեւ մենք եւս երէկուան դպրոցական նորեկը չըլլանք մամուլին, մանաւանդ սիրելի ՀԱՆՐԱԳԻՏԱԿին:

Բացատրութիւն մը եւս մեր «ՊԱՐԱՀԱՆԴԻՍՆԵՐԸ» յօդուածին մասին:

Ճիշդ իմ գրած նիւթս, որ իրապէս պատահունք մըն էր, ինձմէ շարաթ մը առաջ ԼիլԱն ստորագրեր է, և գարմանալին ուր է, ես ալ պատահութիւնը ունեցած չըլլալով այդ շարթուան Հանրագիտակը աչքէ անցնելու՝ իրեւ նորութիւն մը հրամցուցի ընթերցողին, մինչ իրականութեան մէջ թորմիւր վրայ եղող շարթուան մը վարդին շուր տուած եղեր եմ:

Կարծեմ թէ les grands esprits se rencontrent չպիտի ըսէք յարգելի Գրաւեր:

* * *

Մնական թատերախումբին վերջին ձեռնադրան եղանակին մէջ գտած ջերմ ընդունելութիւնը իրաւամբ դուրելի և նախանձելի էր: Հայ թատրոնը քիչ անգամ պատահութիւնը ունեցած է նմանօրինակ չքեղ ընդունելութիւններ արձանագրելու իր տարեգիրներուն մէջ: (Աւելորդ կը համարեմ հոս յիշեցնել թէ այդ տարեգիրները 90% տոկոսով դեռ կը մնան Սմբատ Դաւիթեանին քով):

Մանաւանդ Մնական խումբին վերջին vaudvilleներու շարքը անգամ մը հոս ասպարեցուց որ մերիններուն ալ թատերական ճաշակը կրիայի քայլ մը առած է:

Բայց «հոն ուր լաւն ու լաւագոյնը կը տիրեն» միշտ անհամաձայնութիւն կայ» ըսուած է:

Ճիշդ այսպէս եղաւ նաեւ Մնական թատերախումբին համար, որ հազիւ սկսած նոր ճաշակներու գոհացում տալ, ահա Ալիքսան-

եան, Հոլաս և Հէքիմեան զատուեցան խումբէն, ինչո՞ւ. որովհետեւ հայր Մնակ այլ եւս չուզեց tricorne կոմսերու ծիծաղելի թիփերը ներկայացնել բեմի վրայ:

Այս վերջինները երբ անմասութիւնը ունենան նոր խումբ մը կազմելու հին repertoireով, կը վախճան որ վերջացնեն հոն՝ ուրկէ Մնակ սկսաւ:

Դուք ո՞վ Ալիքսանեան, Հոլաս և Հէքիմեան, աւելի՞ սքանչելի կը գտնէք «Էֆմէնի խաբունը», «Քարա սեյիւմէն հիփեալեսի», «Սիմօնե Մառիմ»՝ «Տալլա» էն, «Պուաթոլիի նշանածները» էն, «Տիկին Պոնիվալ» էն եւ այլն էն:

Աւելի՞ կը նախընտրէք որ հայր Մնակ առաջին վարագոյրի մը կոմս մը ըլլայ և երկրորդին յուսաբեկ ամուսին մը, որ կ'իմանայ թէ այնինչ հովիւրը իր զաւակն է եղեր:

Ընէք կաղաչեմ, ինչ կը հասկնաք դուք, երբ ասանկ արտառոց ներկայացումներու մէջ, ձեր գեղեցիկ դերերը ձգելով բերանաբաց արտառոց թիրեր կը ներկայացնէք:

Վերը՝ բառասիրտ մէջ բաղմած տասնեակ մը կօշկակար Երուսնդներու և երկաթագործ Մերկելիոսներու խաղացելի ծախերն են որ ձեր յաղթանակի պատկը պիտի կազմեն, թէ չէ օթեակներու յուսատու հոծութիւնը և գնահատականը:

Երբ բարոյականին հետ նիւթականին ալ կը փափագիք իրաւամբ, ոյժ տուէք այս vaudvilleներու, դուք ալ ձեր անստգիւտ կարողութիւնները բարդեցէք հայր Մնակին ներուն:

Քանի մը փոքր զիտողութիւններ ալ հայր Մնակին, և թէ կը ներէ ինձ: Փափկանկատութեամբ մոռցուած աննշան կէտ մը, այս վերջին նպաստի ներկայացումներուն մէջ:

Այս ինչ՝ կամ այն ինչ աղքատախնամին կամ դպրոցին ի ՆՊԱՍՏ կը հասկնամ, բայց տիկին ՔնԱՐԻ ի ՆՊԱՍՏ՝ ոչ երբեք:

Երբ այդ դերասաններու սու հասարակ, բացառութիւն Կալուօթ թօլան, «ի ՊԱՏԻ» բառը գործածուեցաւ, ինչո՞ւ «ի ՆՊԱՍՏ» ի վերածուեցաւ այդ բառը տիկին Քնարի համար:

Ուրիշ ուշագրաւ կէտ մըն ալ:

Ձեռք չի չեր որ ներկայացման էր, Ստան-
ճագճեհան,

«Աստուած աղջկանս վրէժը դուն լուծէ»
պարբերութիւնը,

«Բապպիմ թէպէտ վէ մուգատախ հազ-
րէթլէրի»ով սկսաւ, ինչ որ քիչ մը քիչ մն-
տեղի չէր:

Ատիկէ աւելին. փոքրիկ տղու դերեր ներ-
կայացնողները շատ անգամ անանկ գրական
բառեր ու ոճեր կը գործածեն, զորս թերեւս
մեր շրջանաւարտներէն մեծագոյն մասը կան-
գիտանայ:

Ինչ լեզուէ ալ ըլլալու ըլլայ, պէտք է
տարբեր լեզուներու յատկանիշը պահել, և
բառերը իրենց տեղերը գործածել:

Այս և ասոր նման մանր մունր անտեղու-
թիւններէն դուրս՝ իրաւ իրաւ արժանի են
գնահատման խումբին վերջին repertoire,
décorը և հագուստները:

Անշուշտ յառաջիկայ saisonին խումբը
ամբողջացած՝ և բոլորովին անթերի ողջու-
նելու բախտը կունենանք:

Ուրեմն ցտեսութիւն և բարի ճանապարհ:

Բերա

ԱՆԿՈՒՏ ԳԻՇԵՐՈՒԿ

ԱՂՈՒՈՐ ՇԱՀԱԴԻՏՈՒԹԻՒՆ ՄԸ

Կրթիչի քաղաքին բնակիչները, շատ
զարմացան երբ՝ գեղեցիկ առաւօտ մը, տե-
սան պատերուն վրայ փակցուած մեծ ազ-
դեր:

Այս ազդերը՝ կը ծանուցանէին որ, կա-
տուներ կը գնուէր, բայց որո՞նք էին գնող-
ները, ո՞ւր էին, ո՞չ անուն կար և ո՞չ ալ
հասցէ, հաւանաբար աս ազդերը փակցնողը
կատակասէր մը ըլլալու էր:

Բայց ահա ութ օր ետքը, ուրիշ ազդեր
փակցուեցան, սակայն այս անգամ, ամէն
մանրամասնութիւնները գրուած էր և Պ. Պ.
Պութօն և Պիտօն՝ իրենց հասցէն կուտային:

Իրաւ էր, կատուներ կը գնուէր և ղը-
րամն ալ կանխիկ կը վճարուէր:

Ամէնքը զարմացան թէ գնողները ի՞նչ
պիտի ընէին աստ կատուները:

Պութօն և Պիտօն, որոնք իրենց նոր վա-
ճառականութեան համար մթերանոց մը և
խանութ մը բռնած էին, ուրախութիւննին
չափ չունէր, որովհետեւ, առաւօտէն մինչեւ
իրիկուն, իրենց կատուներ կը բերուէր:

Նաեւ, ազդերուն երևումէն ի վեր, ե-
ռանդուն որսորդութիւն մը սկսաւ ծայր
տալ, անանկ որ, հակառակ կատուներու ա-
ռատութեան, որոնք Կրթիչի մէջ կատրէին,
մէկ հատ մ'իսկ չմնաց անհնցմէ:

Եւ այս միջոցին՝ Պութօն և Պիտօն կա-
տու կը գնէին միշտ, կը գտնուէին նաեւ ան-
գործ մարդիկ, որոնք օրական տասը ֆրանք
կը վասակէին:

Վերջապէս, կատու մը չմնաց քաղաքին
մէջ, այն ատեն, քանի մը մուկեր նշմարուե-
ցան տուններու մէջ, յետոյ սկսաւ մուկերուն
քանակութիւնը աւելնալ:

Ի՞նչ օրեր ետքը, մուկերը կատարեալ փոր-
ճանք մը եղան ամէնուն և կատու չկար որ
բռներ անոնք:

Եւ օր մը նոր ազդ մը երևցաւ:

Պութօն և Պիտօն՝ կը հաւանէին ծախել ի-
րենց կատուները ... բայց ի՞նչ գիներով ...:

Վերջապէս ամէնքը որոշեցին գնել:

Ահագին բաղմութիւն մը ողողեց Պութօնի
և Պիտօնի խանութը, կը պօռային, իրար կը
հրէին՝ կատու մը գնելու համար:

Կատուներուն ամէնքը, մինչեւ յետինը
ծախուեցան ...:

Պութօն և Պիտօն աղւոր գործ մը ըրին
սկսան զուարթ կեանք մը վարել, իսկ Կրա-
թիչի բնակիչները հասկցան — բայց քիչ մը
ուշ — այս երկու բարեկամներուն ըրած հը-
նարքը:

Թարգ.

Վ. Գ.

ԿԱՐԵԻՈՐ

Գաւառներէն և Բէ հոսկէ ջերմապէս կը
փնտռեն մեր ԿԱՂԱՆԴԻ ԲԱՅԱՌԻԿ ԹԻԻՐ,
և կը հարցնեն թէ՝ ո՞ւր կրնայ գտնուիլ: Առ
այս կը ծանուցանենք թէ մեր Բացառիկ քիւր
կրնան ունենալ ամէն անոնք՝ որոնք կը գի-
մեն ուղղակի ՊԱԼԵՆՅ ԴՐԱՏՈՒՆԸ, Չափաւ-
նըլար քիւ 20, իրենց նամակին կցելով Յըրշի
փուլ, մէն մի թիւի համար:

ԱՌԿՕ ՆԱՄԱԿ ՄԸ

[ՄԵՐԺՈՒԱԾ ՄԵՐ]

Քա ինչո՞ւ համար, առաջ հա, եսքեն
 Չե քսիր, ինձի հե՞. սուլու չեքէն,
 Սինսիկո չուգեց, ան քսաւ քի քս,
 Քիս պալըխնի եմ հա', միսս ուսես,
 Շրգ մուռու, աղուռ, վասակը եվէլ,
 Տղա՛յ ուզեցիր . . . հա՞ կապած աւել.
 Քի տունս երբա կայ Տայմա սքի սքի
 Էսկայսիզ չար սիրս սել սուռաք մարսիս:
 Իմ ի՞նչս տեսար քի ասանկ քրիր
 Տուն տեղ զրգրոզ պան պիպեռ զեհիր,
 Հե՞, քսե նայիմ քս քեզ ի՞նչ քրի,
 Խըղմմամբարզ չար պաղ զավակ քերի:
 Քու մեկ լախոսըդ, երկուք քրի՞ քս
 Քի ասանկ ինե տառցուցիր երես,
 Անմեն օր մուքեն տօր իրիկուն
 Գիշերն ալ սափի կես քուն կես արքուն
 Տասած վասակս առածս քիւքիւն
 Քեզի Ֆիսանցու քիս մօրըդ քիւքիւն,
 Պերի տուն հազար, ան խմեց Ֆրս Ֆրս.
 Տուվաեց ինձի, երաֆ քառաֆրս,
 Քուկիին կոնակս, անոր տուտար,
 Ֆենեք տօլապր տունիդ մուքվախը,
 Պան տեսան իմին օրիս քե նորեն,
 Ան քիւք նասքսի մարդը անօրեն
 Ինձի՛ քեզի հետ մեկտեղ ասանկուկ
 Այս նասք զուրցեմ քեզի՛ ախ Թագուկ:
 Քու սեվսադ չըլլայ նե եանի չիկա՛յ . . .
 Քրիստոս միածին Ասուած վեռ վիլայ.
 Քեռ քեքքեռով ան վըզը վըզը,
 Պտոռ կտտեմ նա խըրո խըրո,
 Ինձի հե՞, ինձի ասանկ քրաւ նե,
 Անապ ադ նորին, ինչ պտոռ քնե:
 Քա ինձի նայե. եեռ իլե եեքան
 Կնեմ հեմ ինքը հեմ ալ նոռ փեսան,
 Սաղ եմ քս սահա սեն քեֆինե պաֆ,
 Ինձի կը զուռցեն պալսըրը չալաֆ
 Կառ կուռըն օղլու ասլան Սաղաքիկ
 Պանա եարամազ Ֆիաֆա մասիկ
 Ան քի քիս չաքին, պալըխնի էի,
 Ինչո՞ւ սիրս տուիր զուռցի ի՞նչ քեի,
 Ի՞նչ քեի տուռսն անձած վե տառած
 Ասենս տուռեն պանահն. — հալած
 Քիսֆեքով ա՛խ վա՛խ աչք իֆլի Տայմա,

Օ՛Ֆ, քիւք, կնեիր, քե ինչո՞ւ նիմա
 Տայմա խնացող սուռաք կեվրեկ
 Տառցաւ չապուհախ զեհիր զեմպեքեկ,
 Կարն կապեմ ան ցած մարքս Սասանայ
 Քիչ վախիքի մեջ Ասուածն կսնայ
 Անոր վուռուքը վերնայ մէյ մը քի,
 Նորեն մեկզմեկ, կը սիրենք պիլի:

ՍԱՆԱԹԻԿ

ՎԵՐԵՐԵՒՈՒՄ

Ուրախութեամբ եւ պաշտօնակցի
 անկողնակալ քերկութեամբ կը շնոր-
 հաւորենք « ԲԻԻԶԱՆԴԻՈՆ » օրաքերթին
 վերերեւումը, որ ժամանակէ մը ի վեր
 դադրած էր:

« Բիւզանդիոն » այս անգամ կը
 ծախուի ի գին 10 ՓԱՐԱՅԻ նոյն ծա-
 ռարով եւ նոյն քովանդակութեամբ, իսկ
 Շաքար օրերը 20 ՓԱՐԱՅԻ կրկին
 ծառարով եւ նոյն քովանդակութեամբ:

ՄՏՔԻ ԶԲՕՍԱՆՔ

ՊԱՐԳԵՒԱԽՈՐ

Թուել երեք պարագաներ, որոնցմէ մարդ
 կրնայ պաղիլ իր նշանածին:

Կարն, սրամիտ և վայելուչ պատասխան-
 ներու մէջէն, առաջինը պիտի ստանայ շիֆ
 ԱՐԾԱԹԵԱՅ ՄԱՏԻՏ մը վիճակաւ:

Որպէս զի դաւառներէն ալ մասնակցող-
 ներ ըլլան, պատասխանները պէտք է հաս-
 նին մինչեւ 12 օր:

Արտօնատէր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Պապը-Ալի հասէսի քիւ 52.

ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՊԵՐՁԵԱԾՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ


Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուլթան Համալ, Թօփալեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց տոկունութեամբ և գիներու անմիջելի աժանութեամբը շահած է բոլոր իրեն գիմով յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հագուստներու, կանանց թելոյններու և տղայոց չիք և դիմացկուն փոքիւններու ճոխ միտերք մը պատրաստ ունի, որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հագուստի և ուրիշ նմանօրինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրշ. է:

Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին: 50—27



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՑԷ՛Ք

ՓՈՒԹԱՅԷ՛Ք ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեղալ պէյ խանին
սակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը, որք ուղղակի ներածուելով Սեյլանէ, Չինաստանէ, Հնդկաստանէ, Ճապոնէ եւ Ճարոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըրնան գոհանալ թէյերու թարմութեամբ հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յատուկ խառնուրդները, որք կը ծախուին մեծ և փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մատային:

Հ Է Ր Ճ Ա Յ Ի

Ս.ՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ զոհարեղէններու ոսկի և արծաթ շղթայներու, գրպանի պատի և քօնսօրի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջալերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստ Եւնի արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հագուստներ ու անձրեւի համար մուշամպա վերարկուներ, նաեւ ճերմակեղէններ, ֆանթէզիներ և թօափիկներ, ամերիկեան կօշիկներ։ Ունի նաեւ կահկարասի, ձեղունի լամբարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական գորգեր, գետնի մուշամպաներ, կրամօֆօններ ու պիւսիկէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով։

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ շահած է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու տոկունութեան և ոսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար։

Ա Պ Ա Ռ Ի Կ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկմնացեալ գումարին համար շաքաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հայթայթել։

Վաճառատունս հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՁՐՑ ՄԵԾ ՓՈՂՈՏ ԹԻԻ 13

Անգամ մը այցելել բաւական է համոզուելու համար թէ՝ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր զոհացնել իր ամենէն գոյաբարձ ժախճութիւնները։

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

ՍՍԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

50-16

Շաքաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են։